Եթե Սահմանադրության նախագիծն Ազ-ում չի անցնում, դրան հետևում է արտահերթ խորհրդարանական ընտրութուն (ՀՀ ԱԳ և միջազգային առևտրի նախարար Արարատ Միրզոան)

Երեքշաբթի
10 նոյեմբերի 2026թ.
№ 16 (666)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Գևորգ Փարսյանի գլխավորած նախընտրական թիմը՝ Կապան համայնքի զարգացման աննախադեպ ծրագրով

Շարունակությունը՝ էջ 3

Ընդդիմադիր ուժերը հայտարարել են համազգային համախմբման ձևավորման մասին

Հայաստանյան քաղաքական ուժերը միասնական հայտարարություն են տարածել:

«Մենք՝ ներքոստորագրյալ հայաստանյան քաղաքական ուժերս, գիտակցելով հայ ժողովրդի և հայոց պետականության առջև ծառացած ճակատագրական մարտահրավերների ողջ լրջությունը, ունենալով մոտեցումների տարբերություններ և տարակարծություններ մի շարք հարցերում, այդուհանդերձ՝ հայտարարում ենք համազգային համախմբման ձևավորման մասին՝ հաստատելով համախմբման հետևյալ առաջնային նպատակները.

- Ալիևյան սահմանադրության պարտադրանքի մերժում,
- Խաղաղություն՝ առանց միակողմանի զիջումների և տարածքային կորուստների,
- Ազգային ինքնության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտպանություն,
- Ժողովրդավարական ազատությունների և իրավունքների վերականգնում:

Ներքոստորագրյալ քաղաքական ուժերը համաձայնում են միավորել իրենց ջանքերը՝





գերակա ազգային խնդիրների շուրջ հանրային միասնության մթնոլորտ ձևավորելու և մեր երկրի առաջ ծառացած մարտահրավերներին դիմագրավելու նպատակով: Բոլոր քաղաքական ուժերին, հանրային և հասարակական գործիչներին կոչ ենք անում մաս կազմել ազգային այս համախմբմանը:

- «Ուժեղ Հայաստան»
- «Հայաստան» դաշինք
- «Հայաքվե»
- «Ապրելու երկիր»
- «Բարգավաճ Հայաստան»
- «Հայաստանի Հանրապետական կուսակցություն»
- «Հայ ազգային կոնգրես»
- «Ժառանգություն»
- «Միասին»
- «Դեմոկրատական այլընտրանք»
- «Նոր դարաշրջան»
- «Միավորված հայեր»»:

Ազ-ն ընդունեց TRIPP-ի վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը վավերացնելու նախագիծը

Ազգային ժողովը հոկտեմբերի 28-ի նիստում ընդունեց առաջին ու երկրորդ ընթերցմամբ քննարկված նախագծեր, ինչպես նաև համաձայնագրեր վավերացնելու մասին նախագծեր:

Խորհրդարանն ընդունեց նաև (կողմ 63, դեմ՝ 32, ձեռնպահ՝ 0) Կառավարության ներկայացրած՝ ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը վավերացնելու նախագիծը: Ըստ ՀՀ ԱԳՄՆ նախարար Արարատ Միրզոյանի՝ բոլոր այն ենթակառուցվածքները, որոնք կգործեն ՀՀ տարածքում, որևէ կերպ չեն խաթարելու տարածքային ամբողջականությունը, գործելու են ամբողջությամբ ՀՀ-ի ինքնիշխանության ներքո և իրավազորության շրջանակում:

Հրապարակվել է 1000 խոշոր հարկատուների ցանկը. ՃՊՄԿ-ն՝ 2-րդ հորիզոնականում

2026 թ. հունվար–սեպտեմբեր ամիսներին Հայաստանում ամենից շատ հարկ է վճարել բջջային հեռախոսների և տեխնիկայի ներկրող ու վաճառող «Մոբայլ սենթր արթ» ընկերությունը: ՀՀ պետական եկմուտների կոմիտեն հրապարակել է 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը:

Նշված ընկերությունը 9 ամսում 64 մլրդ 336 մլն դրամ հարկ է վճարել պետբյուջե, մինչդեռ 2025 թվականի հունվար–սեպտեմբերին վճարել էր 52,4 մլրդ դրամ (աճը՝ մոտ 12 մլրդ դրամ կամ 22,9%):

2–րդ տեղում Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ 60 մլրդ 825 մլն դրամ հարկով: Անցած տարվա նույն ժամանակահատվածում ընկերությունը վճարել էր 36 մլրդ դրամ (աճը՝ 24,6 միլիարդ դրամ կամ 68%):

3–րդ հորիզականում «Գրանդ Տոբակո» ընկերությունն է՝ 46 մլրդ 226 մլն դրամ հարկով: Ընկերությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետբյուջե էր վճարել 45 մլրդ 943 մլն դրամ հարկ (աճը՝ 300 մլն դրամ կամ 0,62%):

4-րդ և 5-րդ հորիզոնականները զբաղեցնում են համապատասխանաբար «Գազպրոմ Արմենիան» (39 մլրդ 579 մլն) և Արդշինբանկը (38 մլրդ 94 մլն):

Խոշոր հարկատուների տասնյակը եզրափակում է «Ինտերնեյշնլ Մասիս տաբակո» ընկերությունը՝ 20 մլրդ 401 մլն 182 հազար դրամով:

Հիշեցնենք, որ 2026 թվականի առաջին կիսամյակում 1000 խոշոր հարկատուների ցանկը գլխավորում էր «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որը շուրջ մեկուկես տարվա ընդմիջումից հետո վերադարձրել էր Հայաստանի ամենախոշոր հարկատուի դիրքը:

Հոկտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքները Սյունիքում. Գորիս համայնքը կգլխավորի Առուշ Առուշանյանը, Մեղրի համայնքը՝ Սերգո Գալստյանը



Առուշ Առուշանյան

Գորիս համայնքում ընտրություններին մասնակցել է 15 011 քաղաքացի՝ «Համերաշխություն» դաշինքը ստացել է 13 962 ձայն կամ քվեների 93%-ը:



Սերգո Գալստյան

Մեղրի համայնքում ընտրություններին մասնակցել է 4810 քաղաքացի:

ՔՊ-ի նախընտրական թիմը ստացել է 3368 ձայն կամ քվեների 70 տոկոսը:

Ադրբեջանի ՉՈՒ-ն ամրապնդել է դիրքերը նաև Սև լճի հատվածում

Ադրբեջանի զինված ուժերը, Sputnik Արմենիայի ուսումնասիրած արբանյակային լուսանկարների համաձայն, 2024–2026 թվականներին ինժեներական աշխատանքներ են իրականացրել Հայաստանի տարածքում՝ նաև Սյունիքի Սև լճի հատվածում:



Հոկտեմբերի սկզբին գրել էինք, որ Ադրբեջանը վերջին ամիսներին ընդլայնել և ամրապնդել է դիրքերը Հայաստանի տարածքում՝ Ջերմուկի մերձակայքում:

Sentinel-2 արբանյակի լուսանկարները ցույց են տալիս, որ վերջին երկու տարվա ընթացքում Ադրբեջանն ինժեներական աշխատանքներ է իրականացրել նաև Սև լճի հարակից օկուպացված տարածքներում:

2024 թվականի հուլիսի և 2026 թվականի սեպտեմբերի արբանյակային լուսանկարների համեմատությունը ցույց է տալիս, որ այդ ընթացքում կառուցվել են նոր գրունտային ճանապարհներ, լայնացվել են արդեն գոյություն ունեցողները, մաքրվել են տարածքներ, դիրքերի շուրջ իրականացվել են ինժեներական աշխատանքներ, ինչպես նաև հայտնվել են նոր կառույցներ:

Քարտեզում առանձնացված են ինժեներական աշխատանքների հիմնական հատվածները, սակայն ոչ բոլորը:

Նշված են նաև տվյալ շրջանում ադրբեջանական (AZ) և հայկական (ARM) դիրքերի տեղակայման վայրերը: Որպես ադրբեջանական դիրքերի ամրապնդման օրինակ դիտարկենք դրանցից մեկը: Այս հատվածում փոփոխությունները տեղի են ունեցել 2024–2025 թվականներին:

Նշված դիրքերը գտնվում են Հայաստանի տարածքում նաև ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի 1975 թվականի քարտեզների համաձայն: Հատկանշական է, որ ռազմական ենթակառուցվածքների ամրապնդումն ու ընդլայնումը շարունակվել են նաև այն բանից հետո, երբ կողմերը Տավուշում խորհրդային քարտեզների հիման վրա սկսել են սահմանազատման գործընթացը, ինչպես նաև 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում խաղաղության համաձայնագրի տեքստի նախաստորագրումից հետո:

Ավելի վաղ անդրադարձել էինք նաև Սյունիքի և Տավուշի այլ հատվածներում՝ Հայաստանի տարածքում գտնվող ադրբեջանական դիրքերի ամրապնդմանը:

arm.sputniknews.ru
31.10.2026

Գևորգ Փարսյանի գլխավորած նախընտրական թիմը՝ Կապան համայնքի զարգացման աննախադեպ ծրագրով



Սկիզբը՝ էջ 1

Կապանի մշակույթի կենտրոնում նոյեմբերի 4-ին տեղի ունեցավ Կապանի ավագանու ընտրություններում «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության նախընտրական ծրագիրը պաշտոնական ներկայացնելու արարողություն: Դրանով տրվեց նախընտրական քարոզարշավի մեկնարկը: Գևորգ Փարսյանը վերահաստատեց իր դիրքորոշումը՝ շարունակելու համայնքի կայուն զարգացմանն ուղղված աշխատանքը:

«Շանթ դաշինք» ազգայնական կուսակցությունն ընտրապայքարին կմասնակցի՝ քվեաթերթիկում հանդես գալով 2-րդ համարով:

Առաջինը ելույթ ունեցավ «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության ցուցակը գլխավորող, համայնքի ղեկավարի թեկնածու Գևորգ Փարսյանը, ով ներկայացրեց, թե համայնքային կյանքի յուրաքանչյուր ոլորտում ինչ ծրագրեր և աշխատանքներ են նախատեսվում իրականացնել առաջիկա հինգ տարում: Բայց մինչև այդ նա ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանում կատարված աշխատանքները. **«2021 թվականին քարոզարշավում ես հնչեցրի թիվ, որ 2018 թ. համեմատ 2021 թ. համայնքի սեփական եկամուտները կրկնապատկել ենք: Այսօր արդեն արձանագրում ենք, որ 2021 թ. համեմատ համայնքային բյուջեի սեփական եկամուտները քառապատկվել են: Կապանի համայնքը Հայաստանում ամենաշատ սուբվենցիոն ծրագրեր իրականացնողներից է, իսկ սուբվենցիոն ծրագիրը հնարավոր չէ կյանքի կոչել առանց համայնքի ֆոնդային բյուջեում համապատասխան միջոցների առկայության»:**

Գևորգ Փարսյանը նշեց, որ համայնքապետարանի և տարածաշրջանի երկու խոշոր հանքարդյունաբերական ընկերությունների միջև այսօր արդեն ձևավորված են աննախադեպ գործընկերային հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ վստահության և համայնքի զարգացմանը նպաստելու պատրաստակամության վրա: Հանքարդյունաբերության երկու հսկան արդեն իսկ ամրագրել են Կապան համայնքում տարեկան ներդրումներ ունենալու իրենց պարտավորությունները՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ 22 միլիոն տոննա արտադրողականության պարագայում՝ 2.1 միլիարդ դրամ, իսկ Կապանի լեռնահարստացման կոմբինատը՝ 1 միլիոն տոննա արտադրողականության պարագայում՝ 300 միլիոն դրամ: Նշված արտադրողականության աճի դեպքում համաչափորեն ավելանալու է նաև ներդրումների չափը: Նշված գումարներն ուղղվում են համայնքում քաղաքաշինության, ճանապարհաշինության, ենթակառուցվածքների, տրանսպորտի, առողջապահության, կրթության և այլ ոլորտների զարգացմանը:

Սպորտի, առողջապահության, զբոսաշրջության, ինչպես նաև տրանսպորտային ծառայության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանման և բնակֆոնդի բարեկարգման ոլորտներում նախատեսվող ծրագրերն ու անելիքները ներկայացրեց ավագանու անդամի թեկնածու Գոռ Թադևոսյանը: Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի արդյունավետ, համակարգված և մասնագիտացված կառավարումն ապահովելու նպատակով նախատեսվում է ստեղծել մեկ միասնական համայնքային կառույց, կիրականացվի թե՛ շենքերի ընթացիկ սպասարկումը, թե՛ կապիտալ ծրագրեր, մասնավորապես, վերելակների փոխարինում նորերով, տանիքների և շքամուտքերի վերանորոգում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի արդիականացում, շենքերի արտաքին տեսքի բարելավում, անվտանգային համակարգով դռների տեղադրում:

Կրթության, մշակույթի և երիտասարդության, ինչպես նաև սոցիալական ոլորտներում նախատեսվող ծրագրերն ու առաջիկա անելիքները ներկայացրեց ավագանու անդամի թեկնածու Անուշ Մեժլումյանը, ով մասնավորապես նշեց, որ նախադպրոցական կրթությունը հասանելի պիտի լինի համայնքի երեխաներին: Այս համատեսքտում նա տեղեկացրեց նաև, որ այդ ոլորտում կիրականացվի 250 տեղանոց նոր մանկապարտեզի կառուցում Բաղաբերդ թաղամասում, թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատության փոխարեն կկառուցվի նոր մանկապարտեզ: Կնորոգվեն թիվ 6, 7 և 13 ՆՈՒՀ-երը:



Համայնքի բարեկարգման, կառուցապատման և քաղաքային միջավայրի զարգացմանը միտված առաջիկա հինգ տարիների ծրագրերն ու անելիքները ներկայացրեց համայնքի ղեկավարի թեկնածու Գևորգ Փարսյանը:

Մասնավորապես, բացի վերոնշյալից նախատեսվում է վերակառուցել մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի շենքը՝ ստեղծելով ժամանակակից պայմաններ կենտրոնի գործունեության համար, հիմնադրվելու են շախմատի դպրոց և պարի մասնագիտացված դպրոցներ, որոնք կտեղակայվեն վերակառուցված կենտրոնում: Նախատեսվում է վերակառուցել թիվ 3 երաժշտական դպրոցը: Ծրագրերում ընդգրկված են բազմաբնակարան շենքերի վերանորոգումներ՝ վերելակների թարմացմամբ, շքամուտքերի նորոգումով և անվտանգության համակարգերի տեղադրումով:

Նորոգ տեսք կստանան Գարեգին Նժդեհի հուշահամալիրը և նրան հարակից արհեստական լիճը՝ վերածելով բնակիչների ազատ ժամանցի անցկացման գրավիչ գոտու: Բարեկարգումներ կլինեն քաղաքի տարբեր հատվածներում, մասնավորապես, կվերանորոգվեն քաղաքի կենտրոնը Շինարարների թաղամասին միացնող աստիճանները՝ կիրառելով ժամանակակից ճարտարապետական լուծումներ, տարածքը դարձնել գրավիչ թե՛ քաղաքի բնակիչների, թե՛ զբոսաշրջիկների համար: Կասֆալտապատվեն քաղաքի կենտրոնը թաղամասերի (Կավարտ, Բաղաբուրջ, Աշոտավան, Վաչագան, Բարաբաթում) հետ կապող ճանապարհները: Կբարեկարգվի Հալիձորի բերդ տանող ճանապարհը: Ծավ գյուղում նախատեսվում է կառուցել խմելու ջրի մաքրման նոր կայուն և նոր ներքին ցանց:

Ներկաները ջերմությամբ ընդունեցին այն փաստը, որ վերանորոգվելու է Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգին՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ: Այդ ամենը հաստատվում էր լուսանկարներով՝ ավելացնելով ներկաների ոգևորությունը:

«Առաջիկա հինգ տարվա համար մենք բարձր նշաձող ենք սահմանել, բայց կարևոր եմ համարում այն, որ մենք ունենք կամք, արհեստավարժ թիմ, բավարար հնարավորություններ և ուժ՝ իրականացնելու դա: Կարևորում եմ, որ ունենալով անցած տարիների փորձն ու գիտելիքները, գիտենք ինչպես անել: Քարոզարշավն անցկացնելու ենք բաց ու թափանցիկ, բարոյականության և քաղաքակրթության սահմաններում, ինչն առաջարկում եմ մյուս ուժերին: Այն համոզմունքն ունեմ, որ կապանցին տարբերվում է բարձր գիտակցությամբ և խոհեմությամբ, կարողանում է տարբերել ճշմարտությունը կեղծիքից: Կարծում եմ՝ նոյեմբերի 29-ին կապանցին իր վստահության քվեն կտա նրան, ում արժանի է համարում: Մեզ բոլորիս մաղթում եմ ՏՊԱՎՈՐԻՉ հաղթանակ նոյեմբերի 29-ին»,– ելույթը եզրափակեց Գևորգ Փարսյանը:

Հավաքվածներին այլ բան չէր մնում, քան բուռն ծափողջույններով հավանություն տալ Գևորգ Փարսյանի լավատեսությանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՄՈՋԹԱԲԱ ԽԱՄԵՆԵԻ. «Հակառակորդի կողմից ցանկացած սպառնալիք պետք է արժանանա Իրանի ՀՈՒ-ի անհապաղ և արդյունավետ պատասխանին»

Հակառակորդի կողմից ցանկացած սպառնալիք պետք է արժանանա Իրանի ՀՈՒ-ի անհապաղ և արդյունավետ պատասխանին՝ առանց աշխարհագրական սահմանափակումների: Այս մասին զինված ուժերի բարձրագույն հրամանատարների հետ հանդիպմանը կարգադրել է Իրանի գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեին, հայտնում է ՏԱՍՍ-ը:

«Հեղափոխության գերագույն առաջնորդը սահմանել է, որ սպառնալիքի ցանկացած մակարդակ և տեսակ պետք է արժանանա անհապաղ և արդյունավետ պատասխանի՝ առանց աշխարհագրական սահմանափակումների», – ասվում է գերագույն առաջնորդի գրասենյակի հաղորդագրության մեջ:

Պատերազմի ավարտի ժամանակն ու պայմանները կորոշեն Իրանի զինված ուժերը և իրանցի ժողովուրդը, եթե ԱՄՆ-ն վերստին ռազմական գործողություններ սկսի, հավելել է Խամենեին:

Գրասենյակի տեղեկություններով՝ գերագույն առաջնորդը թշնամիներին հզոր դիմակայելու մարտական պատրաստականությունը անվանել է «առավելագույն զսպման» պայման: Զորահրամանատարներն իրենց հերթին զեկուցել են Պարսից ծոցի ափամերձ շրջաններում, Հորմուզի նեղուցի, Օմանի ծոցի գոտիներում և սահմաններում երկրի ՀՈՒ պատրաստականության, ինչպես նաև ռազմամթերքի և հետախուզության, աջակցության ու մարտական կիրառման միջոցների արտադրության բազմապատիկ աճի մասին:

TERT.AM



ԱԼԻ ԱՔԲԱՐ ՎԵԼԱՅԱԹԻ. «Փաշինյանի վարքագիծը Հարավային Կովկասում լարվածության նոր փուլ է բացում»

Իրանի նախկին արտգործնախարար, Իրանի գերագույն առաջնորդի միջազգային հարցերով նախկին խորհրդական Ալի Աքբար Վելայաթին իրանական «Ettelaat» պարբերականում հրապարակել է «Բաց և անկեղծ՝ պարոն վարչապետի հետ» վերնագրով հոդված՝ ուղղված Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Ըստ «Պուրսոն» լրատվական կայքի՝ նա «Էթելաաթ» թերթում գրել է.

«Որքանով ինձ հայտնի է, հայերի և իրանցիների միջև հարաբերությունների երկարատև պատմության ընթացքում երբեք նման աննորմալ երևույթներ չեն արձանագրվել՝ ավելի քան երկու հազար տարվա համատեղ հարաբերությունների ընթացքում՝ սկսած պարթևների ժամանակներից մինչև մեր օրերը:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնելու տարիներին այցելել եմ Հայաստան և Երևանից մեկնել Էջմիածին (ներկայիս Վաղարշապատ)՝ հայերի կրոնական կենտրոն: Այնտեղ հանդիպել եմ հայ հոգևորականության մեծանուն ներկայացուցիչների, եպիսկոպոսների և քահանաների:

Այնտեղ տեսա երկու եկեղեցի: Մի եկեղեցին հոգևորականների և հոգևոր առաջնորդների նստավայրն էր, որտեղ հանդիպեցի հայ հոգևորականներին: Դրա ուղիղ դիմաց գտնվում էր մեկ այլ եկեղեցի, որը կառուցվել էր շահ Աբբաս Մեծի կողմից և շատ գեղեցիկ ու տպավորիչ էր:

Ուսանողական տարիներին առաջին անգամ, երբ այցելեցի Սպահան, գնացի Ջուղայի թաղամաս և տեսա Վանքի եկեղեցին, որը հայերի համար կառուցվել էր Սեֆյան շահ Աբբասի կողմից:

Երկու երկրների հարաբերություններն ուսումնասիրելիս երբեք որևէ մութ էջ չեմ նկատել:

Իրանի և Ռուսաստանի երկրորդ պատերազմի ընթացքում, որն ավարտվեց Թուրքմենչայի պայմանագրի ստորագրմամբ, Հայաստանը անջատվեց Իրանից և դարձավ Ռուսաստանի մաս:

Վերոնշյալ իրադարձություններից հետո



Իրանը երբեք ոտնձգություն չի կատարել այդ երկրի և նրա ժողովրդի անկախության նկատմամբ: Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները մշտապես եղել են բարեկամական:

Ես ճանաչում եմ հայկական քաղաքական կուսակցություններին և խմբերին, ինչպես նաև անձամբ հանդիպել եմ դրանց որոշ առաջնորդների հետ: Իրանում՝ ինչպես հեղափոխությունից առաջ, այնպես էլ դրանից հետո, հայ փոքրամասնությունը միշտ հարգված է եղել, և հայերն Իրանի Իսլամական խորհրդարանում ունեն երկու պատգամավոր:

Խորհրդային Միության փլուզումից և 15 անկախ հանրապետությունների ձևավորումից հետո Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները Խորհրդային Միության փլատակների վրա ձևավորված բոլոր հանրապետությունների հետ եղել են բարեկամական և բնականոն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցից ոմանք անբարյացակամ վերաբերմունք են դրսևորել:

2018 թվականին տեղի ունեցած, այսպես կոչված, «թավշյա» (կամ «գունավոր») հեղափոխության ժամանակ, հետևելով որոշ այլ հանրապետությունների, օրինակ՝ Ղրղզստանի և Վրաստանի օրինակին, Նիկոլ Փաշինյանը փորձեց տապալել Հայաստանի նախկին իշխանությանը, որը սերտորեն համագործակցում էր Մոսկվայի հետ:

Նիկոլ Փաշինյանի նոր կառավարության վնասակար քայլերից մեկը Հայաստանի և Ադրբեջանի միջև թշնամանքի խորացումն էր, որն այժմ առավել սրված է, քան երբևէ:

Սակայն վերջերս պարոն Փաշինյանն այնպիսի քայլեր է ձեռնարկել, որոնք Հայաստանի համար միայն պառակտում և խնդիրներ են առաջացնում և որևէ այլ արդյունք չեն տալիս:

Հայաստանի ժողովրդի շահերի դեմ ուղղված բոլոր բացասական գործողությունները կարելի է մեկ բառով ամփոփել՝ արևմտյան երկրների, հատկապես Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը հետևելու խորացում: Խոսքը լիբերալ-դեմոկրատական կառավարման շարունակության մասին է, որի մեջ ոչ լիբերալիզմն է իսկական, ոչ էլ ժողովրդավարությունը:

Փաշինյանի այս վարքագիծը, հաշվի առնելով նրա անցյալի բարդ նախապատմությունը, Հարավային Կովկասում թշնամանքի և լարվածության նոր փուլ է բացում:

Վերջին ավելի քան ութ տարիների ընթացքում նա գաղտնի և բացահայտ շփումներ ու բանակցություններ է ունեցել բոլոր այն կողմերի հետ, որոնք շահագրգռված են տարածաշրջանում անվտանգության պահպանմամբ կամ դրա խաթարմամբ և դրա նկատմամբ հավակնություններ ունեն:

Ներկայումս նրա հարաբերությունները Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի, իսկ հավանաբար ապագայում նաև Վրաստանի հետ աննկայուն են և անկանխատեսելի:

Նրա վերջին քայլը բազմադեմ մարդու՝ Թրամփի, անհիմն և չմտածված առաջարկի հաստատումն էր՝ Զանգեզուրի միջանցքի անվանումը «Թրամփի ուղի» (Trump Route) կամ «ԹՐԻՓ» (TRIPP) փոխելու վերաբերյալ:

Ես երկու առանձին հանդիպումների ընթացքում՝ մեկ անգամ այդ երկրի արտաքին գործերի նախարարի տեղակալի հետ, որը ժամանել էր Թեհրան, և մեկ այլ անգամ՝ Թեհրանում Հայաստանի դեսպանի հետ, նրանց հստակ ներկայացրել եմ իմ տեսակետները

Իսկ այդ տեսակետները հետևյալն էին. Իրանի Իսլամական Հանրապետությունը տեղյակ է Ուկրաինայի հարցում Ռուսաստանի առջև ծառացած խնդիրներին: Հետևաբար Հայաստանը կարող է սխալ հաշվարկ կատարել՝ կարծելով, թե քանի որ Ռուսաստանը զբաղված է Ուկրաինայի պատերազմով, ավելի քիչ ուշադրություն կդարձնի Հարավային Կովկասի անվտանգությանը:

Այդ պատճառով ես մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել եմ, որ Իրանը՝ Ռուսաստանի հետ կամ առանց Ռուսաստանի, իրեն պատասխանատու է համարում Հարավային Կովկասի անվտանգության պահպանման համար: Ինչպես որ Կյուրոս Մեծի ժամանակներից մինչև այսօր՝ Կովկասը, ընդհուպ մինչև Դաղստանի Դերբենդը, եղել է Իրանի անվտանգության պաշտպանիչ գոտին:

1400 թվականի խորդադ ամսին (2021 թվականի մայիս-հունիս) Թեհրանում կայացած Աստանայի գագաթնաժողովի ժամանակ, որտեղ ինձ բախտ էր վիճակվել ներկա գտնվել նահատակված առաջնորդի՝ նրա հոգու սրբության համար Աստծուն աղոթելով, Նորին Սրբությունը առավոտյան Էրդողանի, իսկ երեկոյան Պուտինի հետ հանդիպումների ընթացքում հստակ հայտարարեց.

«Մենք դեմ ենք Զանգեզուրի միջանցքի ստեղծմանը»:

Նահատակված առաջնորդի ռազմավարական խոսքերը արտաքին քաղաքականության և Իրանի Իսլամական Հանրապետության կարևորագույն պետական հարցերի վերաբերյալ կարմիր գիծ են:

Վերոնշյալ երկու հանդիպումներից հետո Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերը կազմակերպեցին շատ հզոր զորավարժություններ: Այդ ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի նահատակված պետը այցելեց գործողությունների տարածք՝ ցուցադրելու Իրանի ուժն ու վճռականությունը:

Հայաստանի դեսպանին վերջին խոսքս հստակ ասացի. եթե Թրամփն ու նրա դաշնակիցները փորձեն անցնել Իրանի այս կարմիր գիծը, մենք կկոտրենք նրանց ոտքերը:

Անցած շաբաթվա վերջին Հայաստանի խորհրդարանում հավանություն տվեցին այս միջանցքի կառուցմանը: Ի՞նչ է նշանակում այս քայլը:

Նիկոլ Փաշինյանի և նրա հետևորդների այս անարդյունք քայլն իսկապես մի գործողություն է, որը խայտառակություն կդառնա Հայաստանի ազնվական ժողովրդի համար, որն ունի քաղաքական հավասարակշռված և խոհեմ վարքագծի երկարամյա պատմություն»:

5.11.2026 Թ.

Անտառի «վերքերը». ադրբեջանցիները զավթել են Շիկահողի արգելոցի մոտ 1/6 մասը

Երկու ոտքը կորցրած մայր արջը գլորվելով շարժվում էր, քոթոթներին կերակրում: Կենդանին ահավոր նիհարել էր: Սա Շիկահողի արգելոցում կենսաբան Հարութ Աղաթելյանի տեսած ամենասգդեցիկ դրվագներից մեկն է եղել: Ենթադրում են, որ արջը վերջույթները կորցրել է ականի պայթյունի հետեւանքով:

Ութ տարի շիկահողցի կենսաբան Հ. Աղաթելյանը սովորականի պես աշխատանքի էր գնում իրենց գյուղին հարող արգելոց: Քայլում էր կիլոմետրերով, հասնում արգելոցի խորքը, ուսումնասիրում կենդանիներն ու բույսերը: Սակայն ամեն ինչ փոխվեց սահմանային նոր իրականության պատճառով:

2020 թ. 44-օրյա պատերազմից մինչ օրս ադրբեջանցիները փուլ առ փուլ ՀՀ սուվերեն տարածքից մոտ 21 քկմ (2100 հա) են օկուպացրել Կապան խոշորացված համայնքի հարավարեւելյան մասում՝ Ներքին Հանդ ու Ծավ գյուղերի ուղղությամբ:

Օկուպացված 21 քկմ-ի կամ 2100 հա-ի մեծ մասը Շիկահողի արգելոցի տարածքն է (սա պետական սեփականություն է): Եթե նկատի ունենանք, որ 1958-ին հիմնադրված արգելոցի տարածքը 12 քկմ է կամ 12 հազ. հեկտար, ապա ստացվում է, որ ադրբեջանցիներն օկուպացրել են դրա մոտ 1/6-ը: Հակառակորդն արգելոցի տարածքում եւ դրանից դուրս՝ Կապանի համայնքային հողերի վրա, անտառը հատելով, դիրքեր ու միջդիրքային ճանապարհներ է կառուցել, ականապատում իրականացրել:

Ռազմական ու սահմանային իրավիճակի այս փոփոխությունից հետո էլ Հարութ Աղաթելյանը շարունակել է աշխատանքը արգելոցում. նա արգելոցի գիտության եւ տուրիզմի բաժնի ղեկավարն էր:

Կենսաբանը նշում է, որ Շիկահողի արգելոցի այս հատվածը, որը ներկայում օկուպացված է հակառակորդի կողմից ու դարձել է վտանգավոր թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների համար, իսկ նախկինում Հայաստանի ու Արցախի սահմանն էր, կարեւոր միգրացիոն գոտի է եղել կենդանիների, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված պարսկական ընձառյուծների, բեզոարյան այծերի, գորշ արջերի համար: Ըստ նրա՝ իր ուսումնասիրությունների ժամանակ ամենաշատ կենդանատեսակների հանդիպել է Սյունիքի հենց այս հատվածում:

«Հետքի» զրուցակիցն ասում է, որ 12 հազ. հա ընդգրկող Շիկահողի արգելոցում հարուստ կենսաբազմազանություն կա. այստեղ հաշվառված է անոթավոր բույսերի 1100 տեսակ, 214 տեսակի ողնաշարավոր, այդ թվում՝ ավելի քան 150 թռչնատեսակ:

Մինչեւ ադրբեջանական շարունակական ագրեսիաները, որոնք սկսվեցին 2020-ից, ըստ Հ. Աղաթելյանի, արգելոցի այս հատվածում մարդու շարժ չկար, եւ կենդանիները տեղաշարժվելու ազատություն ունեին: Ու քանի որ արգելոցը պահպանման խիստ ռեժիմ ունի, նույնիսկ տեղի գյուղացիները չէին մտնում տարածք, մեքենայի շարժ չկար: Այնինչ հիմա կենդանիների միգրացիոն գոտին վերածվել է ադրբեջանական հենակետերով ու միջդիրքային ճանապարհներով ականապատ տարածքի:

Այս պայմաններում, ըստ Հ. Աղաթելյանի, Շիկահողի արգելոցում սկսել են տեսնել վնասված վերջույթներով կենդանիներ: Հիմնական ենթադրությունն այն է, որ կենդանիները վնասվել են ականների վրա: Կենսաբանն ընդգծում է, որ իրենք նախկինում նման դեպքեր չեն գրանցել: Ավելին՝ հայ դիրքապահները տեղի գյուղացիներին պատմել են, որ տեսել են, թե ինչպես է բեզոարյան այծերի հորանը (խումբը) անցնելիս պայթել ականների վրա. մեկը շպրտվել է մի կողմ, մյուսը՝ մեկ այլ կողմ, իսկ կենդանի մնացածները փախել են:

«Հետքի» զրուցակիցն ասում է, որ եթե արբանյակային պատկերներով հնարավոր է հաշվարկել տարածքային կորուստներն ու անտառի հատված տեղամասերը, ապա կենդանական աշխարհին հասցված վնասը գնահատելը դժվար է, մանավանդ որ հասանելիություն չկա օկուպացված գոտուն:

35-ամյա Հարութ Աղաթելյանն արդեն մի տարի չի աշխատում արգելոցում, բայց շարունակում է իր ընտանիքով ապրել ու գյուղատնտեսությամբ զբաղվել հարազատ գյուղում՝ Շիկահողում, որտեղից հայ-ադրբեջանական շփման գիծն ընդամենը 3-4 կմ հեռավորության վրա է:

Հակառակորդի դիտարկման ու նշանառության տակ

Ճանապարհին մի մեծ, սեւ ամպ ենք տեսնում: Մտածում ենք՝ ուր որ է նորից անձրեւ է գալու: Կապանից դեպի Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ ու Ծավ գյուղեր տանող ոլորապտույտ ճանապարհին աշնան շունչն է: Հասնում ենք Սրաշեն: Այստեղից՝ 17-18-րդ դարերի խոնարհված եկեղեցու տարածքից, երեւում են Շիկահողի արգելոցն ու երկու կողմերի առաջապահ դիրքերը: Աշնան գեղեցկությունն ու անձրեւից հետո տարածված մաքուր օդը մի պահ դառնում են ժամանակավրեպ:

Եկեղեցուց ներքեւ՝ Շիկահող գետի ձորակի արեւմտյան ափին, սրաշենցիների գյուղատնտեսական հողերն են, իսկ գետից արեւելք անտառապատ սարալանջեր են, որոնց վրա տեղակայվել են հայ դիրքապահները: Մերոնցից ավելի բարձր՝ անտառապատ բարձունքի երկայնքով, դիրքավորվել են ադրբեջանցիները: 2022-ի սեպտեմբերյան հարձակման ժամանակ հակառակորդը գրավել է այս բարձունքի վրա տեղակայված հայկական դիրքերը, այդ թվում՝ ամենաբարձր կետը՝ Խաչինխութ գագաթը (1290 մ, ներքեւի լուսանկարում՝ ամենից ձախ), որից մինչեւ Սրաշենի եկեղեցին ուղիղ գծով 3 կմ է, իսկ հայկական բանակը ստիպված է եղել նահանջել ու նոր դիրքեր կառուցել սարալանջի վրա:

«Հետքի» հարցին, թե արդյոք հակառակորդը դիտարկում է մեզ, Կապանի համայնքապետի տեղակալ Մարատ Հարությունյանը պատասխանում է. «Ենթադրում եմ, որ այո, բայց քանի որ սադրիչ գործողություններ չկան, օրինակ՝ դրոններ կամ այլ ակտիվ գործողություններ, բնականաբար, սահմանափակվում են դիտարկմամբ»:

Փոխհամայնքապետը ցույց է տալիս Սրաշենը դիրքերից բաժանող ձորակն ու պատմում, որ տարիներ առաջ գյուղացիների անասուններն այդտեղ պայթել էին ականների վրա: Որոշները կտոր-կտոր էին եղել, վիրավորվածներն էլ, որ անօգնական վիճակում էին մնացել, ասում է՝ չեք պատկերացնի, թե ոնց էին օրերով բառաչում: Ձորակում, ըստ Մ. Հարությունյանի, մոտ 50 հա վարելահող կա, որոնց մոտ 95 տոկոսը մշակվում էր մինչեւ ադրբեջանցիների առաջխաղացումը: Տեղացիներն այդտեղ հիմնականում հացահատիկ էին աճեցնում, այլ մշակաբույսերի ծրագրեր էլ կային, սակայն 2022-ի աշնանային հարձակումից հետո դրանց իրագործումը կիսատ մնաց: Այսօր ձորակի վարելահողերի միայն փոքր մասն է մշակվում:

«Թվում է, թե վարելահողերում խրամատներ չկան, դիրքեր չկան, խնդիր չկա, մեխանիզմը գցեն, զբաղվեն վարուցանքով, բայց մարդիկ դուրս են գալիս, բնականաբար, տեսնում են թշնամու դիրքերը, մտածում են՝ ավելորդ ռիսկի դիմել պետք չէ, ավելի լավ է՝ դրանով ավելի հեռու վայրերում զբաղվենք: Հողերը դեգրադացվում են, ինչից տուժում են թե՛ գյուղացիները, թե՛ գյուղատնտեսությունը»,- ասում է Մարատ Հարությունյանը:

Նա ընդգծում է, որ Շիկահողում ու Սրաշենում հակառակորդի նշանառության տակ են գրեթե բոլոր արոտավայրերը, վարելահողերն ու բնակելի հատվածները: Դեռ 2023 թ. Կապանի համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը «Հետքին» հայտնել էր, որ խոշորացված համայնքի 27 քկմ կամ 2700 հա օկուպացված է ադրբեջանցիների կողմից (ըստ էության, խոսքը Կապանի ուղղությամբ ՀՀ կորուստների մասին է, որը ներառում է թե՛ համայնքի վարչական սահմաններում, թե՛ դրանցից դուրս գտնվող հողերը): Այս թիվը նշում է նաեւ փոխհամայնքապետ Մարատ Հարությունյանը՝ հավելելով, որ, բացի օկուպացված հողերից, մի քանի հարյուր հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր էլ գտնվում են հակառակորդի փաստացի նշանառության տակ եւ այլեւս պիտանի չեն օգտագործման համար: Այս ամենին պետք է գումարել նաեւ ՀՀ տարածքի հաշվին առաջացած չեզոք գոտին՝ միջդիրքային վտանգավոր հատվածը (թե՛ Շիկահողի արգելոցում, թե՛ դրանից դուրս), որը չի գտնվում կողմերից որեւէ մեկի տիրապետության տակ, սակայն դիտարկվում է երկու կողմից էլ, նշանառության տակ է ու անօգտագործելի, այսինքն՝ կորսված է հայկական կողմի համար:

2022 թ. սեպտեմբերին, ըստ Մ. Հարությունյանի, Շիկահող-Սրաշեն հատվածում հայկական կողմին հաջողվեց կանգնեցնել ադրբեջանցիների առաջխաղացումը, սակայն շփման գծի ամբողջ երկայնքով մինչ օրս բնակիչներն անընդհատ սպասում են ինչ-որ բանի: «Մարդիկ դուրս են գալիս իրենց պատշգամբ, տեսնում են թշնամու դիրքերը: Դուք լինեք, ո՞նց կզգաք»,- հռետորական հարց է տալիս մեր զրուցակիցը:

Անտառի «վերքերը»

Սրաշենից հարավ-արեւելք՝ Ծավ գետի ձորակում, Ներքին Հանդ գյուղն է, որն այսօր երեք կողմից շրջապատված է ադրբեջանական դիրքերով: Ներքին Հանդից հարավ էլ Շիկահողի արգելոցի ընդարձակ անտառներն են, որտեղ 2021-ից մինչ օրս ադրբեջանցիներն ինտենսիվորեն դիրքեր ու ճանապարհներ են կառուցում:

Սրաշենի եկեղեցու մոտից անզեն աչքով, իսկ հեռադիտակով՝ շատ ավելի մանրամասն երեւում են ադրբեջանցիների դիրքերն ու սարերի կատարներից իջնող զիգզագաձեւ ճանապարհները: Դրանք կառուցվել են արգելոցի անտառների հաշվին: Իսկ հայ-ադրբեջանական սահմանը, որը մինչ օրս չի սահմանազատվել ու սահմանագծվել, խորհրդային տարիներին անցնում էր հենց այս սարերի կատարներով, այսինքն՝ 44-օրյա պատերազմից հետո ադրբեջանցիները ոչ միայն հայտնվել են դրանց վրա, այլեւ շարունակական ագրեսիաներով իջել են լանջերով ու, հընթացս հայկական դիրքերը գրավելով, հասել մինչեւ Ներքին Հանդ: Նրանց ամենամոտ դիրքը գյուղի բնակելի հատվածից բաժանում է ընդամենը 530 մետր: Ադրբեջանցիների օկուպացիայի տակ է հայտնվել Ներքին Հանդից 1.5 կմ հարավ-արեւմուտք գտնվող հին գյուղատեղին, իսկ դիրքերի անմիջական հարեւանությամբ՝ գյուղի գերեզմանոցը, որն այլեւս անհասանելի է տեղի բնակիչների համար:

Ընդ որում՝ Ներքին Հանդում հաշվառված է պատմության եւ մշակույթի 3 անշարժ հուշարձան՝ գերեզմանոցը (19-րդ դար, հին գյուղատեղիից 100-200 մ հեռավորության վրա), եկեղեցին (18-19-րդ դարեր, հին գյուղատեղիի տարածքում) եւ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշարձանը (1965 թ., հին գյուղատեղիի տարածքում): Ստացվում է, որ երեք հուշարձաններն էլ անցել են հակառակորդի վերահսկողության տակ: Ավելին՝ 2025-ի մարտին Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը «Հրապարակ» օրաթերթին հայտնել էր, որ օկուպանտները քանդել են հուշարձանը եւ դրա տեղում զորանոց կառուցել:

Ադրբեջանցիներն օկուպացրել են ոչ միայն Շիկահողի արգելոցի մոտ 1/6-ը, այլեւ նրանց ուղիղ նշանառության ու դիտարկման տակ է հայտնվել 1958-ին հիմնադրված «Սոսիների պուրակ» արգելավայրը: Այն զբաղեցնում է 64 հա տարածք, որը ձգվում է Ծավ գետի հունով մինչեւ Ներքին Հանդ ու հայ-ադրբեջանական սահման: Սա սոսու միակ բնական ամենամեծ պուրակն է Կովկասում, որը պահպանվում է հնագույն ժամանակներից: Այստեղ աճում են 1000-ից ավելի 200-250 տարեկան արեւելյան սոսիներ, որոնց բարձրությունը 30-35 մ է, իսկ տրամագիծը հասնում է 3 մետրի: Արբանյակային պատկերները ցույց են տալիս, որ ադրբեջանցիները զավթել են արգելավայրի՝ Ներքին Հանդից արեւելք ընկած նեղ շերտը:

«Հետքի» հետ զրույցում Կապանի փոխհամայնքապետ Մարատ Հարությունյանը նշում է, որ Ներքին Հանդի գրեթե ամբողջ հողային ֆոնդը (բացի բնակելի հատվածից) հայտնվել է կամ թշնամու ձեռքում, կամ դարձել է բուֆերային (չեզոք) գոտի: Համայնքային իշխանությունը նաեւ արբանյակային պատկերներով է հետեւում օկուպանտների գործողություններին: Հարությունյանն ասում է, որ ադրբեջանցիները քանդման աշխատանքներ են կատարում ու հաշվի չեն առնում՝ սրբատեղի է, թե ոչ: «Ավերածություններ կատարվում են բոլոր տեղերում՝ թե՛ արգելոցում, թե՛ գերեզմանոցում,- նշում է մեր զրուցակիցը,- բայց ամենատհաճը ջրաղբյուրների կորուստն էր: Նոր ջրային համակարգ կառուցվեց, եթե չեմ սխալվում 2023-2024 թթ: Նաեւ նոր գերեզմանատեղի ենք հատկացրել»:

Հակառակորդի դիտարկման ու նշանառության տակ են ոչ միայն հայկական գյուղերն ու հողատարածքները, այլեւ Կապան-Ճակատեն-Շիկահող-Սրաշեն-Ծավ ռազմավարական նշանակության ճանապարհը, որը Շվանիձորով դուրս է գալիս դեպի Մեղրի՝ Հայաստան-Իրան միջպետական սահման: Սա Կապանը սահմանին կապող երկրորդ ճանապարհն է (առաջինը Մ-2 միջպետական մայրուղին է, որն անցնում է Քաջարանով): Ընդ որում՝ նախկինում սա միջպետական ճանապարհ էր՝ Մ-17, սակայն 2023-ի նոյեմբերին Կառավարությունը որոշել է այն դարձնել հանրապետական նշանակության ճանապարհ՝ Հ-63:

«Ամենօրյա ռեժիմով ինժեներական աշխատանքներ են կատարվում թշնամու դիրքերում, ամենօրյա շարժը երեւում է, ենթադրում եմ, որ նման ծառահատումներից հետո սովորաբար գալիս են բնական աղետներ: Ի՞նչն է պահում հողային գրունտը. ծառը, անտառը: Եթե դրանք չկան, կարելի է ենթադրել, որ գրունտի հոսք կլինի»,- ասում է Մ. Հարությունյանը՝ հավելելով, որ հատումներն իրականացվում են համատարած, կարեւոր չէ՝ դրանք կարմիրգրքյան ծառեր են, թե ոչ: Իսկ կենդանիները պարբերաբար պայթում են ականների վրա:

Սահմանային իրավիճակն ազդել է գյուղերի սոցիալ-տնտեսական դրության վրա

Կապանի փոխհամայնքապետն ասում է, որ եթե շփման գծի այս հատվածում նախկինում լինում էին կրակոցներ, ապա մոտ մեկ տարի է, ինչ լարվածություն չկա, հանգիստ է, բայց ադրբեջանցիները շարունակում են հայաստանի տարածքում տեղակայած իրենց հենակետերի ինժեներական աշխատանքներն ու ընդլայնում անձնակազմը:


Հիշեցնենք, որ 2020-2022 թթ. ագրեսիաներից հետո՝ 2023 թ. մայիսին, ադրբեջանցիները Շիկահող գյուղից 2-3 կմ հեռավորության վրա՝ հայկական դիրքերի թիկունքային ճանապարհից, առեւանգել էին 2 հայ զինծառայողի, ապա նրանց ներկայացրել իբրեւ դիվերսանտ ու կեղծ դատավարությամբ դատապարտել 11.5 տարվա ազատազրկման: 2023-ի դեկտեմբերին գերիների փոխանակման արդյունքում զինծառայողները փոխանցվել էին Հայաստանին: Եվս մի միջադեպ գրանցվել էր 2024-ի փետրվարին Ներքին Հանդի մոտ. ադրբեջանական կրակի հետեւանքով հայկական կողմը 4 զոհ եւ 1 վիրավոր էր տվել:

Չնայած հիմա հանգիստ է, համայնքի ղեկավարի տեղակալի խոսքով՝ ստեղծված իրավիճակն աղետալի հետեւանքներ է ունեցել գյուղատնտեսության վրա. «Ներքին Հանդում զրոյացել է գյուղատնտեսությունը՝ դաշտավարությունը, անասնապահությունը, իսկ Սրաշենում եւ Շիկահողում դեռեւս փորձում են մի 10 տոկոսի չափով տնային պայմաններում զբաղվել անասնապահությամբ, բայց կարելի է ասել՝ 90 տոկոսով անկում կա այս գյուղերում»:

Շարունակությունը՝ էջ 6

Ադրբեջանը փուլ առ փուլ շուրջ 200 քկմ է օկուպացրել ՀՀ սուվերեն տարածքից

2020 թ. 44-օրյա պատերազմից մինչ օրս Ադրբեջանը փուլ առ փուլ շուրջ 200 քկմ է օկուպացրել ՀՀ սուվերեն տարածքից: Անօրինական ներխուժումները եւ զավթումները կատարվել են հատկապես 2021-2023 թթ.: Այդ ընթացքում Ադրբեջանը շարունակական հարձակումներով ՀՀ-ից տարածքներ է օկուպացրել Գեղարքունիքի, Վայոց Ձորի ու Սյունիքի մարզերում: Ընդ որում՝ 200 քկմ-ի մեջ ներառված չէ ՀՀ տարածքի հաշվին ձեւավորված չեզոք գոտին՝ միջդիրքային վտանգավոր հատվածը, որը չի գտնվում կողմերից որեւէ մեկի տիրապետության տակ, սակայն դիտարկվում է երկու կողմից էլ, նշանառության տակ է ու անօգտագործելի, այսինքն՝ կորսված է հայկական կողմի համար: Այս մասին գրում է «Հետքը»:



Վայոց Ձորում եւ Սյունիքում Հայաստանի կորցրածի մի մասը բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) են՝ արգելոց ու արգելավայրեր, որոնք պետական սեփականություն են: Այս հոդվածում կանդրադառնանք Սյունիքի մարզի օկուպացված ԲՀՊՏ-ներին:

2020 թ. պատերազմից հետո, երբ նոյեմբերի 9-ի փաստաթղթով Արցախի ամբողջ Քաշաթաղի շրջանը հանձնվեց Ադրբեջանին, վերջինիս զինված ստորաբաժանումներն առաջացան ու հայտնվեցին Սյունիքի հյուսիսում գտնվող Սեւ լճի անմիջական հարեւանությամբ:

Խորհրդային վարչական բաժանման համաձայն՝ հայ-ադրբեջանական սահմանն անցնում է հենց լճի վրայով: Լճի հայելու մակերեսը, ըստ Google-ի քարտեզով մեր չափումների, 1.7 քկմ է (170 հեկտար), որից Ադրբեջանի տարածքում է գտնվում 0.3 քկմ-ն (30 հա), այսինքն՝ ընդամենը 18 տոկոսը:

Չնայած սրան՝ 2021-2022 թթ. ադրբեջանցիները խորացել են ՀՀ սուվերեն տարածքում եւ գրեթե ամբողջությամբ զավթել լիճը: Հայկական կողմը ներկայում դրան հասանելիություն ունի միայն հարավարեւմտյան կողմից: Եթե 2021-ին ադրբեջանցիները վերահսկում էին սահման հանդիսացող Փոքր Իշխանասար (3455 մ) եւ լճից հարավ՝ ՀՀ տարածքի խորքում գտնվող Գլուխ Ձագեձորի (3234 մ) լեռները, ապա 2022-ի սեպտեմբերյան հարձակման արդյունքում գրավել են նաեւ ռազմավարական հսկայական նշանակություն ունեցող Մեծ Իշխանասարը (3552 մ), որը վերահսկում է ամբողջ շրջակայքը, ապա դրա հարավային լանջով խորացել ՀՀ տարածքում 3 կմ՝ հասնելով Վարդասար բարձունքին (3214 մ): Այդպիսով՝ նրանց վերահսկողության տակ են անցել Սեւ լիճը եզերող բոլոր հիմնական գագաթները:

Սեւ լիճը անհոսք քաղցրահամ լիճ է, որը կազմավորվել է Սյունիքի բարձրավանդակի Մեծ Իշխանասար հրաբխային կոնի մերձկատարային մասում՝ 2670 մ բարձրության վրա: Հյուսիս-հարավ ձգվածությունը 1.2 կմ է, արեւմուտք-արեւելք ձգվածությունը՝ 1.6 կմ, առավելագույն խորությունը՝ մոտ 7.5 մ, ջրի ծավալը՝ ավելի քան 9 մլն խմ: Լիճը շրջապատող տարածքը ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի անոթավոր բույսեր:

«ՀԵՏՔ»

Անտառի «վերքերը». ադրբեջանցիները զավթել են Շիկահողի արգելոցի մոտ 1/6 մասը

Սկիզբը՝ էջ 5

Ըստ 26-ամյա շիկահողցի Մուրազ Արզումանյանի՝ 2020 թ. պատերազմից հետո, հատկապես՝ 2022-ի աշնանից, շատ բան է փոխվել իրենց գյուղում: «Կորցրեցինք հողեր, որտեղ զբաղվում էինք անասնապահությամբ: Հիմա չկա արոտավայր, որ մարդիկ տանեն անասուններին, բաց թողնեն: Կենդանին անցնում է թշնամու սահման, ավելի ճիշտ՝ մեր սահմանն է, բայց անցնում է թշնամուն, ու շատ խոչընդոտներ են առաջանում: Ամբողջը խնդիր է,- նշում է շիկահողցի երիտասարդն ու շարունակում,- հիմա ես եմ՝ գնում եմ խոտ հնձեմ կամ գնում եմ անասունի հետեւից, թուրքը բռնում է կամ կրակում է: Ոչ մի անվտանգային երաշխիք չկա»:

Սահմանային իրավիճակը ազդել է նաեւ բնակչության թվի վրա: Մ. Հարությունյանի փոխանցմամբ՝ ադրբեջանական հաջորդական ագրեսիաների սկզբնական շրջանում այս հատվածի գյուղերից (Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ծավ) բավականին ակտիվ տեղաշարժ կար դեպի Կապան, սակայն հետագայում պատկերն աստիճանաբար փոխվել է: Ըստ մեր զրուցակցի՝ դրան նպաստել են Կապանի համայնքապետարանի նախաձեռնած միջոցառումները: Օրինակ՝ օրական երկու անգամ քաղաքից դեպի այս գյուղեր եւ հակառակ ուղղությամբ անվճար տրանսպորտ է աշխատում:

Բնակչության քանակական եւ տարիքային փոփոխությունները երեւում են հատկապես դպրոցներում: Շիկահողի, Սրաշենի ու Ներքին Հանդի դպրոցներից յուրաքանչյուրում 1-6 աշակերտ է մնացել: Շիկահողի դպրոցն, օրինակ, ընդամենը մեկ աշակերտ ունի, որը սովորում է 8-րդ դասարանում:

61-ամյա շիկահողցի Վլադիկ Աղաթելյանը հիշում է, որ երբ ինքն էր իրենց գյուղի դպրոց հաճախում, այն ուներ մոտ 250 աշակերտ, իսկ իր ավագ եղբոր ժամանակ կրթօջախը նույնիսկ երկու հերթով էր աշխատում: Վ. Աղաթելյանը գյուղատնտես է, բայց կես դրույքով նաեւ ակումբավար է աշխատում Շիկահողում: Ասում է՝ երանելի ժամանակներ են եղել գյուղում՝ թատերական ներկայացումներ, համերգներ էին կազմակերպում, շրջիկ համերգներով այլ գյուղեր էին գնում: Ակումբավարի խոսքով՝ վերջին միջոցառումն այստեղ կազմակերպել են 2015-ին՝ հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հիմա էլ ակումբը կա, բայց, մեծ հաշվով, երեխա չկա գյուղում: «Մեր տնից մինչեւ կլուբ եմ գնում, մոտ 1 կմ է, մի մարդ չեմ տեսնում, որ ասեմ՝ բարի լույս»,- նկատում է մեր զրուցակիցը:

Ճակատենից մինչեւ Ծավ դպրոցներն օպտիմալացվելու են: Կառավարությունը նախատեսել է Ծավում մեծ դպրոց կառուցել, որտեղ պետք է հաճախեն մնացած գյուղերի աշակերտները: Թեեւ Ծավը եւս սահմանամերձ է, շփման գծից համեմատաբար հեռու է, փոքր-ինչ ավելի ապահով: Ըստ փոխհամայնքապետի՝ Ծավի նոր դպրոցի կառուցումն անընդհատ ձգձգվում է, հինը մասամբ քանդել են, իսկ ծավեցի աշակերտները տեղավորվել են մասնաշենքերից մեկում: «Հետքի» հետ զրուցած տեղացիները տարակուսում են, թե ինչու են կենտրոնական իշխանությունները որոշել քանդել Ծավի դպրոցը, եթե այն վթարային չէր, բացի դրանից՝ այսքան ժամանակ ձգձգում են նոր շենքի կառուցումը:

Մուրազ Արզումանյանը Շիկահողի չամուսնացած երիտասարդներից մեկն է: Ավագներն ասում են, որ նրա նման տղաները գյուղում շատ են: «Այստեղ անորոշ է անվտանգության հարցը,- ասում է Մուրազը,- լսել եք, որ վերջերս Սիսիանի գյուղերից մեկում մի ադրբեջանցի էր հայտնվել: Բացառված չէ, որ մի օր էլ այստեղ կարող է հայտնվել: Հիմա ես եմ, ամուսնանում եմ, ընտանիքիս հետ գալիս եմ ապրեմ էստեղ, բայց եթե չկա այդ անվտանգությունը, ես չեմ պատկերացնում՝ երեխայիս վերցնեմ, գամ էստեղ ապրեմ, որովհետեւ ոչ մեկը չի երաշխավորելու այդ անվտանգությունը»:

69-ամյա շիկահողցի Մանվել Արզումանյանն արդեն 20 տարի աշխատում է արգելոցում, նախկինում կենդանաբան էր, այժմ՝ պահեստապետ: Ասում է՝ ամենօրյա ռեժիմով աշխատանքի է գնում-գալիս: Ըստ նրա՝ սահմանային դիրքերի առկայությունից գյուղում վախ չկա, բայց զգուշավորություն, ամեն դեպքում, կա: Ընդգծում է, որ հայ-ադրբեջանական սահմանը պետք է ճշգրտվի, իսկ ներկա վիճակի մասին ասում է. «Պիտի զգույշ լինենք, հիմա սա է, պիտի էսպես ապրենք»:

Շիկահողում նաեւ խանութ չկա: Առեւտուրը Կապանից են անում: Իսկ հացը բերում են Ծավից, որտեղ փուռ կա: Մինչդեռ ժամանակին, ըստ Վլադիկ Աղաթելյանի, Շիկահողը Ճակատենից մինչեւ Ծավ ձգվող ենթաշրջանի կենտրոնն էր, հիվանդանոց ուներ՝ իր ծննդատնով, հեռախոսակայան, տրիկոտաժի արտադրամաս: Հայկական սովետական հանրագիտարանի (1982 թ.) տվյալներով՝ Շիկահողը ոչ միայն դպրոց, ակումբ ու գրադարան ուներ, այլեւ կապի բաժանմունք, կենցաղսպասարկման տաղավար, կինո, մանկապարտեզ, գյուղում զբաղվում էին ոչ միայն անասնապահությամբ, այլեւ ծխախոտի, հացահատիկի ու կերային կուլտուրաների մշակությամբ: Տարիների ընթացքում ու հատկապես 2020-ից հետո շատ բան է փոխվել այստեղ:

45-ամյա Նվեր Պատվականյանը ՇՄՆ էկոպարեկային ծառայության Սյունիքի մարզային վարչության «Կապան» տեղամասի գլխավոր էկոպարեկն է (Շիկահողի արգելոցի պահպանությունն իրականացնում է Էկոպարեկային ծառայությունը): Ասում է, որ արգելոցում խախտումներ հատուկենտ են լինում, եւ էկոպարեկների ու գյուղացիների միջեւ խնդիրներ չկան: Վերջիններիս արտոնություն է տրված անտառից մինչեւ 8 խմ թափուկ հավաքել: Սակայն Վլադիկ Աղաթելյանը նկատում է, որ փայտի այդ ծավալը չի բավականացնում, քանի որ դրանով պետք է թե՛ տունը տաքացնեն, թե՛ պահածոներ փակեն, թե՛ օղի թորեն:

«Հետքի» հետ զրույցներում շիկահողցիները երկու հիմնական խնդիր են նշում, որոնք մարդկանց դրդում են հեռանալ գյուղից: Մեկը անվտանգությունն է, մյուսը՝ աշխատատեղերի պակասը, որոնք, ըստ մեր զրուցակիցների, հավասարաչափ լուրջ են, բայց աշխատատեղերի բացակայությունը կամ նվազումը նաեւ անվտանգությամբ է պայմանավորված (գյուղատնտեսության ծավալները խիստ նվազել են, նոր աշխատատեղեր էլ չկան, չեն բացվում): Ստացվում է, որ անվտանգությունը, ամեն դեպքում, գլխավոր մտահոգությունն է:

Մեր հարցին, թե ինչպես է տեսնում Շիկահողի ապագան, 35-ամյա կենսաբան Հարութ Աղաթելյանը պատասխանում է. «Իմ ամբողջ կյանքը նվիրել եմ անտառներին: Հիմա ապրում եմ գյուղում: Էկոլոգիապես մաքուր էս տարածքը թողնեմ, գնամ հանքարդյունաբերական գոտում ապրե՞մ: Ուղղակի գյուղերի հանդեպ ուշադրություն չկա, երիտասարդները գյուղից դուրս են գալիս»: Հարութը մանկահասակ երեխա ունի, արգելոցում աշխատանքից դուրս գալուց հետո կենտրոնացել է գյուղատնտեսության վրա, երկար տարիներ ճագարաբուծությամբ է զբաղվում:

«Դեռ հույսս չեմ կորցնում: Մտածում եմ՝ գոնե ուշադրությունը կմեծանա էս COP17-ի հետ կապված, թեկուզ արտասահմանից եկած մարդիկ կտեսնեն, թե ինչ փոքր տարածքում ինչ մեծ կենսաբազմազանություն ունենք: Սա բավականին մեծ պոտենցիալ է»,- ասում է շիկահողցի կենսաբանը:

Իսկ թե ինչ ակնկալիքներ ունի Կապանի համայնքային իշխանությունը Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովից (COP17), որն այս օրերին հյուրընկալել է Հայաստանը, փոխհամայնքապետ Մարատ Հարությունյանն ասում է. «Քանի որ ինչ-որ հանդիպումների կամ խորհրդակցությունների անմիջական մասնակից չենք, չենք կարող հստակ կարծիք հայտնել, բայց հուսանք, որ կգա ժամանակ, երբ մեր հողերը նորից հետ կգան մեզ, ինչից հետո բավական երկար ժամանակ պետք է իրականացվեն վերականգնողական աշխատանքներ»:

Շիկահողում աշուն է: Անձրեւից հետո հողը թաց է: Երեկոյանում է, շուտով վառարաններից կբարձրանա ծուխը, ուրցով թեյը կդնեն կրակին: Գիշերվա մուգ վարագույրը կփակի արգելոցի օկուպացված տարածքների պատկերը, բայց դա կտեւի մինչեւ լուսաբաց:

HETQ.AM, 28.10.2026

Մեղրին ամփոփեց «ԱՊՀ 2026 թվականի մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումների շարքը

Նոյեմբերի 1-ին Մեղրիի մարզամշակութային կենտրոնում տեղի ունեցավ «Մեղրի՝ Համագործակցության մշակութային մայրաքաղաք 2026» ծրագրի փակման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Գրիգորյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Անտոնյանը, ԱՊՀ անդամ պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի գործադիր տնօրեն Անատոլի Իկսանովը, հիմնադրամի ներկայացուցիչ Կամոլ Ռախանովը, ԱՊՀ անդամ պետությունների պատվիրակությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք, տարբեր կառույցների ներկայացուցիչներ և բնակիչներ:

Միջոցառումն ամփոփվեց ԱՊՀ երկրների ազգային երգի և նվագարանների համերգային ծրագրով: Երեկոյի ընթացքում ելույթ ունեցան Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի արտիստները՝ ներկայացնելով իրենց երկրների երաժշտական ու մշակութային ինքնատիպությունը:



Հանդիսավոր արարողության խորհրդանշական պահերից էր մշակութային մայրաքաղաքի կոչման փոխանցումը Բելառուսի Մոլոդեչնո քաղաքին:

Մեղրին ավարտեց իր մշակութային մայրաքաղաքի առաքելությունը՝ իր պատմության մեջ թողնելով միջազգային համագործակցության, բարեկամության և մշակութային երկխոսության նշանակալի էջ:

Շնորհակալություն բոլոր գործընկերներին, կազմակերպիչներին, մասնակիցներին և Մեղրիի բնակիչներին՝ այս կարևոր նախաձեռնության իրականացմանն իրենց ներդրումն ունենալու համար:

Մեղրիի համայնքապետարան

Յակոբ Այնթապլեանը և Դավիթ Գասպարյանը՝ «Սյունյաց երկրի» խմբագրությունում

Բժիշկ, բանաստեղծ, ազգային գործիչ Յակոբ Այնթապլեանը և ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը, ովքեր գտնվում են Սյունիքում, հոկտեմբերի 27-ին այցելեցին «Սյունյաց երկրի» խմբագրատուն:

Նրանց հետաքրքրում էին մարզային պարբերականի վիճակը, ստեղծագործական ծրագրերը:

Յակոբ Այնթապլեանը հատկապես ուշադրություն դարձրեց պարբերականի հատուկ համարներին, որոնցից՝ Ակսել Բակունցին և Արամ Մանուկյանին նվիրված համարները: Սամվել Ալեքսանյանը նվիրեց մեծահարգ հյուրին:

Յակոբ Այնթապլեանն իր «Ես քեզի կու գամ» հատընտիրը, որի շնորհանդեսը մեկ օր առաջ տեղի էր ունեցել Կապանի էլեկտրոնային գրադարանում, նվիրեց պարբերականի խմբագրին:

Դավիթ Գասպարյանը կարևորեց «Սյունյաց երկրի» հետ ստեղծագործական համագործակցությունը, որը երկու տասնամյակի պատմություն ունի, նաև պատրաստակամություն հայտնեց հետայսու նույնպես շարունակել այդ գործընկերությունը, քանզի «Սյունյաց երկիրը» ոչ միայն երկրամասի բացառիկ տարեգիրն է, այլև բախտորոշ մեր ժամանակներում Սյունիքն արթուն պահող, Սյունիքի արժանապատվության պաշտպանության առաջնագծում կանգնած աննկուն դիրքապահը:

Յակոբ Այնթապլեանի և Դավիթ Գասպարյանի՝ «Սյունյաց երկիր» խմբագրատուն կատարած այցը հերթական դրսևորումն էր այն նվիրումի, որ նրանք ունեն հայ գրի, հայ մշակույթի և պարբերական մամուլի հանդեպ:



ԱԼՅՈՇԱ ԽՈՍՐՈՎՅԱՆԸ Բաքվի ռազմական դատարանի կողմից դատապարտված է 20 տարվա ազատազրկման

Ալյոշա Արամայիսի Խոսրովյանը ծնվել է 1967թ. մարտի 28-ին:

Նա գերի է վերցվել Ադրբեջանի զինված ուժերի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 3-ին՝ ենթադրաբար «Ադրբեջանի Հանրապետության տարածքներում հետախուզական գործողություններ իրականացնելիս» (մեջբերում մեղադրական եզրակացությունից):

Գերի վերցվելուց հետո նա ընդգրկվել է 2020 թ. հակամարտության կապակցությամբ Ադրբեջանի կողմից ձերբակալված հայ քաղաքացիների շարքում:

Նրա քրեական գործով մեղադրական եզրակացությունը՝ Լյուդվիգ Մկրտչյանի հետ համատեղ, հաստատվել և ուղարկվել է Բաքվի ռազմական դատարան 2021 թվականի մայիսի 20-ին:

Նրա դատավարությունը տեղի է ունեցել Բաքվի ռազմական դատարանում՝ դատավոր Էլբայ Ալլահվերդիևի նախագահությամբ, դատավորներ Ռաֆիգ Աբբասովի և Ջամալ Ռամազանովի մասնակցությամբ, 2021 թ. հունիսի 2-ից (նախնական լսում) մինչև 2021 թ. օգոստոսի 2-ը (դատավճիռ):

2021 թ.օգոստոսի 2-ին Ալյոշա Խոսրովյանը դատապարտվեց 20 տարվա ազատազրկման՝ Ադրբեջանի քրեական օրենսգրքի 113-րդ, 115.2-րդ, 279.1-րդ, 318.2-րդ հոդվածներով և այլ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար:



Մեծարվեց հայրենի եզերքի նվիրյալը



«Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ մեծարման ցերեկույթ՝ նվիրված ուսուցիչ, պատմաբան, թանգարանագետ, շուրջ տասը պատմագիտական գրքի հեղինակ Գրիշա Սմբատյանին: Օրվա խորհուրդը մանրամասնեց միջոցառման կազմակերպիչներից Սառա Մարգարյանը, իսկ գրադարանի երիտասարդ աշխատակցուհի Անիտա Ստեփանյանը հավուր պատշաճի ներկայացրեց օրվա հերոսի անցած ուղին՝ Սյունյաց աշխարհի հոգևոր, պատմական և մշակութային ժառանգության պահպանման ծիրում:

Կապանի համայնքապետարանի, կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Թերեզա Գալստյանը, ում դասավանդել է Գրիշա Սմբատյանը, ջերմ խոսքեր ձոնեց իր ուսուցչին. **«Հնարավոր չէր լինել նրա աշակերտը և չսիրել պատմություն առարկան: Ընկեր Սմբատյանը ուսուցիչ էր նաև դասերից դուրս, մեր մեջ սերմանել է շատ կարևոր արժեքներ և գաղափարներ, բացահայտել ճշմարտություններ, որոնք դասագրքերում շարադրված չեն: Նրա ավանդած դասերը մարդուն ուղեկցում են ամբողջ կյանքի ընթացքում»:**

Կապանի երկրագիտական թանգարանի ներկայիս տնօրեն Ալյոշա Հայրապետյանն անդրադարձավ Սմբատյանի թանգարանային գործունեությանը, մասնավորապես այն բանին, որ նրա շնորհիվ Կապանի երկրագիտական թանգարանը սեփական օջախ ունեցավ՝ հարմարավետ պայմաններով: Գրիշայի մտերիմ ընկեր Աշոտ Հայրումյանն իր ակնածանքն փորձեց փոխանցել չափածո տողերով, իսկ պատմական հուշարձանների պահպանության մասնագետ Աստղիկ Հակոբյանը հուշեր ներկայացրեց օրվա հերոսի հետ անձնական շփումներից:

Տեսաուղերձներ և բարեմաղթանքներ հնչեցին նաև էկրանից՝ դասախոս, խմբագիր Միհեր Քումունց, գեղանկարիչ Ռուբիկ Կոստանդյան, գրաբարագետ Ալեքսանդր Քանանյան, աշխատանքային ընկերներ, նրա երբեմնի աշակերտներ, համագյուղացիներ և էլի ուրիշներ: Գրիշա Սմբատյանի ավանդն առանձնապես ակներև է հարազատ եզերքի քաղաքական բռնաճնշումների ժամանակը ներկայացնելիս: Մոռացությունից փրկել է տասնյակ անվանի և շարքային մարդկանց ճակատագրեր, այդ մասին պատմեց Վոլոդյա Մարտիրոսյանը: Գրիշայի կերպարն ամբողջացավ Արթուր Պատվականյանի, Հենրիկ Մելիք-Քարամյանի, շնորհալի գեղանկարիչ Էրիկ Դավթյանի և մյուսների հուշերով:

Մեծարման միջոցառմանը մասնակցում էր Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը: Պարզվում է, որ նա էլ է եղել Գրիշա Սմբատյանի աշակերտը: **«Եթե մի քանի ուսուցիչ եմ ունեցել, ովքեր իմ կյանքում առանձնահատուկ դեր են ունեցել, նրանցից մեկը Գրիշա Սմբատյանն է: Շատ լավ հիշում եմ, թե ինչ հետաքրքիր էր մատուցում նյութը, յուրաքանչյուր թեմա ավանդելիս լրացուցիչ տեղեկություններ էր մատուցում: Նաև շատ խստապահանջ էր, բայց նաև երբեմն դասաժամին կատակում էր՝ ավելի ջերմացնելով մթնոլորտը»,**– վերհիշեց համայնքի ղեկավարը՝ ավելացնելով, որ Գ. Սմբատյանն արժանի է մեծարանքի խոսքերին, որոնք հնչեցին երեկոյի ընթացքում:

Գրիշա Սմբատյանը երախտագիտություն հայտնեց ջերմ խոսքերի համար, նաև հարկ համարեց հիշել Պլուտարքոսի հայտնի միտքը, թե թույներից ամենազորեղը գովեստն է: Նա պարզապես երախտագիտություն հայտնեց իր գրքերի խմբագիրներին, այն մարդկանց, ում հետ ճանապարհ է անցել: Նաև հայտնեց, որ իր համար կարևորը ինչ-որ բան անելն է: Այժմ ինքն աշխատում է հերթական գրքի վրա, մի այլ գիրք է խմբագրում: Եվ այդ ամենն է, որ իրեն ապրեցնում է: Նա խոստովանեց, որ իր համար ամենակարևորը դպրոցականներն են, դասարանն է, գրատախտակը...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
21.10.2026

ՌԴ ԱԳՆ-ն Հայաստանին խորհուրդ է տալիս ԵՄ անդամակցության հայտ ներկայացնելուց առաջ հանրաքվե անցկացնել



Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Ալեքսանդր Պանկինը հայտարարել է, որ Եվրամիությանն անդամակցելու վերաբերյալ Հայաստանի հանրաքվեն պետք է նախորդի անդամակցության հայտ ներկայացմանը:

«Փաշինյանի թիմի նախաձեռնած՝ Հայաստանի համար Եվրամիությունում տեղ գտնելու գործընթացը հանգեցրել է պարադոքսալ իրավիճակի, երբ Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) Հայաստանի անդամակցությունից ստացվող իրական օգուտներն օգտագործվում են մեկ այլ ինտեգրացիոն միություն անցնելու անհիրական գաղափարը առաջ մղելու համար»,– հայտարարել է ռուս դիվանագետը ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում:

Նրա կարծիքով՝ ստեղծված իրավիճակի տրամաբանական ելքը հանրաքվեի անցկացումը կլիներ, որի ընթացքում Հայաստանի ժողովուրդը, երկրի Սահմանադրությամբ նախատեսված կարգով, կարտահայտեր իր կամքը՝ հետագա ինտեգրացիոն կուրսի վերաբերյալ:

«Տրամաբանությունը հուշում է, որ նախ պետք է հանրաքվե անցկացնել և հարցնել ժողովրդին, ապա նոր պաշտոնական հայտ ներկայացնել Բրյուսել, այլ ոչ թե հակառակը, ինչի վրա վերջին շրջանում հրապարակայնորեն պնդում է Հայաստանի ղեկավարությունը»,– նշել է Պանկինն ու հավելել. **«Եթե հայտը ներկայացվի, ժողովրդի կարծիքն այլևս ոչ ոքի չի հետաքրքրի»:**

ՌԴ ԱԳ նախարարի տեղակալը հիշեցրել է, որ Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից ստացած ակնհայտ առավելություններն ու ինտեգրացիոն կապերի խզման հնարավոր հետևանքները օբյեկտիվորեն գնահատելու նպատակով վերջերս հանրությանը ներկայացվել է զեկույց:

«Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից ստացած ակնհայտ առավելություններն ու ինտեգրացիոն կապերի խզման հետևանքով հնարավոր կորուստները օբյեկտիվորեն գնահատելու նպատակով վերջերս հանրությանը ներկայացվել է զեկույց՝ Հայաստանի նկատմամբ ԵՏՄ պայմանագրի գործողության կասեցման հնարավոր հետևանքների վերաբերյալ: Զեկույցը պատրաստվել է Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարության կատարման շրջանակում»,– հիշեցրել է Պանկինը:

Նա հստակեցրել է, որ զեկույցում ներկայացված սցենարը «դիտարկվում է որպես ծայրահեղ միջոց՝ միության անդամ պետությունների տնտեսական անվտանգությանը սպառնացող ռիսկերը և նրանց հնարավոր վնասները կանխելու նպատակով»: **«Այդ միջոցը կիրականացվի, թե ոչ, կախված է Հայաստանի ղեկավարության պատրաստակամությունից հանել Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների մոտ առաջացած մտահոգությունները»,**– նշել է Պանկինը:

Նրա խոսքով՝ առայժմ Մոսկվան Երևանից այս հարցի վերաբերյալ կառուցողական ազդակներ չի ստացել: Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Հայաստանը ներկայում չի պատրաստվում դուրս գալ Եվրասիական տնտեսական միությունից (ԵՏՄ), սակայն շարունակում է Եվրամիությանն անդամակցության ուղղությամբ քայլերը. **«Մենք ԵՏՄ-ից դուրս գալու նախապատրաստություն չենք սկսել: Մենք պատրաստվում ենք մեր ժողովրդին առաջարկել այլընտրանքային տարբերակներ, ինչպես խոստացել էինք:**

Մեր ժողովուրդը պետք է ընտրություն կատարելու հնարավորություն ունենա: Մենք չենք պատրաստվում դուրս գալ ԵՏՄ-ից, սակայն գիտենք, որ այդ կառույցում մեր գործընկերները բարձրացնում են կողմնորոշման և հանրաքվե անցկացնելու հարցը: Ես ասել եմ, որ այս պահին հանրաքվե անցկացնելու հիմքեր չկան:

ԵՏՄ-ից դուրս գալու և ԵՄ-ին անդամակցելու հարցով հանրաքվե անցկացնելուց առաջ պետք է անցնենք որոշակի ընթացակարգեր»:

Փաշինյանը նոյեմբերի 5-ին հայտարարել է, որ Հայաստանը կարող է 2027 կամ 2028 թվականին պաշտոնապես դիմել ԵՄ-ին՝ անդամակցության գործընթաց սկսելու համար: Մինչդեռ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը նախկինում զգուշացրել է, որ երկու կառույցներին միաժամանակ անդամակցելն անհնար է, և Երևանին հորդորել է հնարավորինս արագ կողմնորոշվել:

© FACTOR.AM

«Արևմտյան Ադրբեջանի» հորինված քարտեզի վտանգը «կախված» է պատմաբանների գլխին. ի՞նչ է կատարվում ԳԱԱ պատմության ինստիտուտում

Aravot.am-ը փորձել է ԳԱԱ պատմության ինստիտուտից տեղեկանալ՝ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհրդում արդյո՞ք ամիսներ առաջ քննարկել են Կադաստրի կոմիտեի հովանավորությամբ էլեկտրոնային քարտեզ ստեղծելու հարցը, որտեղ պիտի ցույց տրվեին Հայաստանի բնակավայրերի նախկին անուններն ու ովքեր են այդտեղ բնակվել:

Թեև ինստիտուտը մամուլում եղած հրապարակումների վերաբերյալ հերքում է տարածել, բայց հերքման տեքստի մի մասով հաստատվում է, որ այդպիսի քննարկում իրականում եղել է:

Նաև հետաքրքրվել են՝ ճի՞շտ է արդյոք, որ խորհրդարանական ընտրություններից մի քանի օր հետո թուրքական անուններով տեղանունների հարցը նորից բերվել է գիտխորհուրդ, հաստատվել, նույնիսկ թեմատիկ ֆինանսավորման հարց է լուծվել, հաստատվել է մի թեմա, որի նպատակը Հայաստանում մահմեդականների ու թուրքերի հաստատման պատմությունը միջնադարից սկսած ուսումնասիրելը պիտի լինի:

Ինստիտուտի գիտքարտուղար Հակոբ Մուրադյանը նախ հեռախոսով փոխանցել է, որ հեռավար են աշխատում, և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Համո Սուքիասյանն ու փոխտնօրեն Կարեն Խաչատրյանը տեղում չեն: Ապա ասել է. «Ես տեղյակ չեմ, մեզ մոտ նման հարց չի քննարկվել, նման բան գոյություն չունի, մենք տվել ենք պարզաբանում, որը մեր կայքում դրված է»:

Դիտարկմանը, որ ինստիտուտի պարզաբանման մեջ չի հերքվում, որ եղել է գիտխորհրդի քննարկում, Հակոբ Մուրադյանը կրկին շեշտել է, որ իրենց վերջնական ասելիքն այդ պարզաբանման մեջ է: Մյուս հարցերի վերաբերյալ էլ ասաց, որ առաջին անգամ է լսում:

Պատմության ինստիտուտից կայքի զրուցակիցները, որ ցանկացան իրենց անունները չհրապարակել, փոխանցել էին, որ խորհրդարանական ընտրություններից մի քանի օր հետո թուրքական անուններով տեղանունների հարցը նորից բերել են գիտխորհուրդ ու հաստատել: Գտել են հեշտ ձև, պետական ուրիշ կառույցից ստացել են Գիտության կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման ծրագիր բերելու երաշխիք, հաստատել նախագիծն ու ուղարկել նախարարություն:

Կայքի զրուցակիցները պնդում են, որ նիստից հետո ամբողջ ակադեմիան քննարկում էր, թե ոնց են հաստատել մի թեմա, որի նպատակը Հայաստանում մահմեդականների ու թուրքերի հաստատման պատմությունը միջնադարից սկսած ուսումնասիրելը պիտի լինի:

Ծրագիրը պիտի ուսումնասիրի նաև տեղանունների թրքացման պատմությունը:

Զրուցակիցներից մեկի խոսքով՝ սա դառնալու է ադրբեջանական նարատիվները հայ պատմաբանների ձեռքով դակելու գործիք, և զարմանալի չի այս իշխանությունների կողմից պետական ֆինանսների տրամադրումը հետազոտական խմբին:

Նկատենք, որ Պատմության ինստիտուտի պարզաբանման մեջ նշվում է, որ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Նպատակային ծրագրեր -2027» մրցույթին հայտեր ներկայացնելու հարցը քննարկվել է գիտխորհրդի նիստում.

«Հաշվի առնելով, որ Պատմության ինստիտուտում տասնամյակներ շարունակ իրականացվում են Հայաստանի բնակավայրերի պատմությանը նվիրված հետազոտություններ և առկա է համապատասխան գիտական ներուժ, առաջարկվել է պատրաստել գիտահետազոտական ծրագրի հայտ և մասնակցել «Նպատակային ծրագրեր-2027» մրցույթին՝ նպատակ ունենալով կատարել համապարփակ ուսումնասիրություն ՀՀ բնակավայրերի պատմության վերաբերյալ»:

Առաջարկվել է ծրագիրն իրականացնել ՀՀ Կադաստրի կոմիտեի հետ համագործակցությամբ, քանի որ հետազոտության արդյունքները կարող էին օգտագործվել Կադաստրի կոմիտեի պատրաստած ՀՀ Ազգային գեոպորտալի «Աշխարհագրական անվանումների պետական քարտադարան»-ի տվյալներն առավել ամբողջական դարձնելու նպատակով:



Վախճանվել է Սյունյաց աշխարհի ճանաչված զավակ, մեծահամբավ բժիշկ Սլավիկ Ամիրյանը

Հոկտեմբերի 26-ի վաղ առավոտյան, կյանքից հեռացել է բոլորիս սիրելի Սլավիկ Սուրենի Ամիրյանը:

Բժշկական գիտությունների դոկտոր Սլավիկ Ամիրյանը ծնվել է 1956 թ. ապրիլի 19-ին Գորիս քաղաքում:

1979 թվականին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը:

1979 թվականից աշխատում էր Գորիսի շրջանային կենտրոնական հիվանդանոցում (1991 թվականից՝ գլխավոր բժիշկ):

Արցախյան պատերազմի առաջին օրերից Սյունիքի տարածաշրջանի գլխավոր վիրաբույժն էր, 1993 թվականից՝ Սյունիքի անհետաձգելի բժշկական օգնության կենտրոնի տնօրեն և տարածաշրջանի քաղպաշտպանության բժշկական ծառայության պետ:

Արցախյան առաջին հերոսամարտի ժամանակ ղեկավարել և կազմակերպել է անհետաձգելի բուժօգնությունը մարտադաշտում: Իրականացրել է վիրավորների տեսակավորումն ու տարհանումը ՀՀ բուժհիմնարկներ և կլինիկական հենակետեր:

Լաչինի մարդասիրական միջանցքի բացումից հետո ազատագրված տարածքներում կազմակերպել է բուժօգնություն:

Ամիրյանի «Հրազենային վնասվածքների բուժումը և բուժօգնության կազմակերպումը տեղային ռազմական ընդհարումների ժամանակ» թեմայով դոկտորականի թեզը ՀՀ ռազմական բժշկագիտության առաջնեկն էր:

Ռուսաստանի բնական գիտությունների (1999), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային (1999) ակադեմիաների անդամ էր, «Հայաստանի վիրաբուժության 21-րդ դար» ընկերակցության Մեծ խորհրդի անդամ, Եվրոպական համալսարանի պատվավոր պրոֆեսոր (2000):

1990-95 թվականներին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր էր Գորիսի շրջանից:

Պարգևատրվել է ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի Իվան Պավլովի, Վլադիմիր Վերնադսկու, ՀՀ «Մխիթար Հերացի», «Մարտական գործողությունների մասնակից» մեդալներով, ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալով:

Նա իր գործունեության ու հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածության շնորհիվ ընդմիշտ տեղ է գտել Սյունիքի և հատկապես Գորիսի նորագույն շրջանի պատմության լուսավոր էջերում:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 09.11.2026թ.: